GAGIK GHAZINIAN
Doctor of Legal Sciences, Professor, Academician NAS RA
law@ysu.am

THE LEGAL AND POLITICAL PROBLEMS OF RECOGNITION AND COMPENSATION OF THE ARMENIAN GENOCIDE. A NEW STRATEGY OF INVESTIGATION AND PREPARATION OF THE ISSUE

Key words: declaration, strategy, policy, legal, plane, legal, grounds, chronicle, documentary, atlas, legal authority

On the eve of the 100th Anniversary of the Armenian Genocide the summary document of national policy directed at its recognition and condemnation became "The All-Armenian Declaration of the Armenian Genocide's 100 Anniversary". In contrast with the domestic and foreign policy implemented in the previous period with regard to the Genocide, that could be called "the policy of facts", the Declaration is a qualitative U-turn. The sharp change of the implemented national and state-directed policy in this domain is manifested by Item 6 of the Declaration stating that "the integrated will of Armenia and of the Armenian Nation is to achieve International recognition and to overcome the aftermath of the Armenian Genocide". Evidently, Armenia is set out on a new and most probably a long-time process, viz.: translocating the issue of the Armenian Genocide from the plane of history to the plane of legal reality so as to prepare the basic structure for presenting claims for compensation, rather than to wait for Turkey's recognition.

In the Armenian Genocide as in one of the elements of the Armenian issues putting forward this type of strategic issue will demand first of all to hold summary monitoring of policies implemented in that direction to date, that is to explore what has been done and what is to be done further on.

It has to be acknowledged in this regard that until now the policies of the Armenian organizations and of the Armenian diplomacy following the declaration of Independence have achieved certain success mostly in two directions:

a) Recording facts of the Genocide as implemented by Armenia's Diaspora and the foreign explorers, having by now acquired a considerable amount of data.
b) Recognition and condemnation of the Armenian Genocide by a part of states possessing basic International rights, as well as by a certain number of International organizations.

What has been done is of course a mammoth task; however, it is evidently not sufficient. Therefore, a new issue is arising in connection with the Armenian Genocide: the issue of building the intermediate tactical objectives to achieve the strategic national and statehood-directed objectives.

Until now we have not possessed either a specially built-up policy or a basic research mechanism for its deployment. That issue has never been approached in its complexity or practical and multilateral structure. The matter was raised in a campaign-directed or emotive plane rather than in that of the legal practice.

In the strategy for achieving compensation and recognition of the Genocide, it is necessary to reject the demagogical declarations and pathetic emotional speeches. It is necessary to use carefully-worded diplomatically correct formulations in accordance with International Law to determine the strategic objectives as essentially defined in Item 6 of the Declaration, i.e., to achieve recognition of the Armenian Genocide by Turkey and to overcome its aftermath. To implement these strategic objectives, it is necessary to work out a package of legal claims regarding them as initializing the process of rehabilitating the individual, communal and nationwide rights and legitimate interests.

This type of strategy means that looming ahead is a transition from the policy of rehabilitating historic facts and discovering their fact-recording bases to qualitatively new practical orientation of the work to do. That calls forth the need to identify the directions of the forthcoming actions, each accompanied by a list of consecutive operations aimed at resolving the principal objective.

As a strategic objective, to achieve recognition of the Armenian Genocide on the part of Turkey as well as to overcome its aftermath, it is necessary, in our opinion, in the first place, to implement research policy consisting of four component parts:

a) Diplomatic or foreign policy;
b) International legal right;
c) Turkey's domestic legal law;

d) Building up the geographic documentary atlas of the Armenian Genocide, a factual account of the massacres using archival legal data presented in the form of injuries inflicted upon property.

1. Diplomatic or Foreign-policy component. The strategic objective in this regard is Turkey's recognition of the Genocide and elimination of its aftermath. However, since Turkey has adopted the policy of falsehood and negation of the irrefutable reality, a new issue is coming up: in the course of diplomatic communications with the basic subjects of International relations to achieve recognition and condemnation of the Armenian Genocide on their part. A philosophical reference would be quite appropriate here confirming the rule of changing quantity resulting in changing quality. The policy of negation by Turkey will eventually lead it to a diplomatic and foreign-policy stalemate, since Turkey's political situation will progressively deteriorate in parallel with the quantitative growth of the Armenian Genocide recognition by the International Community. The recognition of Genocide on the part of the principal subjects of International relations will eventually make Turkey give up the policy of denial, recognize and condemn the Genocide. The main stipulating factor here is going to be the progressive part of Turkish society, the youth in the first place, their numbers permanently growing, and their attitude to this issue steadily changing. [1]

On the other hand it is to be kept in mind that the modern world finds itself in constant change. On the turn of the 21st century there was revision of borders in Europe and the new wave of newly emerging states moved to the East. In this regard the developments can be very unexpected and beneficial for us, so that to be prepared for that, one has to expand the scope of the countries which have already recognized and condemned the Genocide.

2. The Component of Legal International Recognition, Condemnation and Compensation of the Armenian Genocide. The first research of this subject was done by Professor Yu. Barseghov who substantiated Turkey's responsibility with regard to the Armenian Nation from the viewpoint of International Law for the crime perpetrated.[2] This problem has been the focus of attention for the Armenian and foreign researchers (Sh. Torikian, V. Tatrian, P. Ohanian, H. Hakobian, I. Arabian, V. Vardanian, A. Papian, A. de Chaias, I.V. Ternon, Armen Marukian[3], etc.

---

[1] This fact is confirmed by Academician Gevorg Poghosian, Director of the Institute of Philosophy, Sociology and Law in his Research (see **Gevorg Poghosian**, 2015, 140 pp.)

[2] On this point see **Մարուքյան Ա.**, 2014, 3:

[3] A. Marukian in his work "Problems of Eliminating the Aftermath of Armenian Genocide and their historical and legal substantiations" (Yerevan, 2014) found out that yet at the turn of the 20th century the Armenian Genocide was considered to be a crime, independent of the later developed and adopted International and legal doctrine on Genocide.

What has been done is not sufficient. It is necessary to fill in and to make the substantiations complete and multilateral. It is unambiguously true that "the research done in the legal plane has an expressly scientific character; therefore it is necessary to translocate the historic facts and the International legal theoretical knowledge to the plane of practical application". [4]

With regard to the principal strategic objective, it is necessary to assign the legal political program for preparing the International legal basis of the issue that would profoundly denounce the genocide as a fundamental crime against humanity starting from the classical period of International Law until our time. In this domain, the principal objectives consist in working out and showing that prior to the mid-20th century Genocide had already been an action forbidden by the International Law, which Turkey as a state adopted as International legal obligations to regard the Armenians and other minorities as stable and permanent human groups and to prevent their extermination. Thus, starting from the early 19th c. to the early 20th c., including of course the year 1915, the International Community qualified the Turkish actions as actions against humanity. So, **formulation of the International legal grounds for the punishability of the Armenian Genocid** *is interconnected with a number of various specific legal problems.* Those are, in particular:

1. Identifying legal grounds for the punishability of the Armenian Genocide.
2. **The problems of specifying the applicable law with regard to the Armenian Genocide.** Concerning the problem of punish ability for the Armenian Genocide, specifying this problem has a great significance viz.: whether genocide had been banned under International law prior to the prohibition of the crime of genocide and the adoption of the Convention in 1948 stipulating a punishment therefore, or whether the latter was banned only after its validation on October 12 1951. In this problem one has to be guided by the rules of clause 1 of the Convention as well as by the documents that preceded the adoption of the Convention in which documents that criminal action would be unambiguously prohibited.[5] Also among the proposed legal problems is the study of precedents in the International legal history involving cases of International agreements having retroactive force.

[4] See **Մարության Ա.**, 2014, 4:

[5] While discussing the legal problem of applicable law with regard to the Armenian Genocide, we found it expedient to invite the researchers' attention to the fact that in this connection the subject of scrutiny must be not the existing International or domestic legal regulations providing for legal responsibility, but rather the regulations existing at the time of the effectuated Armenian Genocide. That has an extremely great significance for presenting the future International claims appropriately to avoid failure at International and domestic entities (see **Վարդանյան Վ.,** September 19 –20, 2014).

3. Of particular importance is carrying out the relevant research on International legal succession of the Ottoman Empire and the Turkish Republic Firstly, it is necessary to precisely substantiate that the Turkish Republic is not only a successor of the Ottoman Empire, but that the latter is a successor of the given state's International legal identity. Secondly, it is necessary to clear out whether the Turkish Republic is the successor of the Ottoman Empire within the aspect of the International accountability or the latter's legal succession is limited only to issues of agreements, property payments or archives. It has to be noted that the mentioned problem, i.e.: the problem of responsibility of the successor state for the unlawful actions by the predecessor state has not been sufficiently studied within the scholarship of International Law, and it is necessary to carry out the relevant research at this level as well.
4. Clarifying the International legal responsibilities adopted by the Ottoman Empire in the domain of security for the Armenian population. [6]
5. Specifying the competence of Armenian Republic as the aggrieved party of the Armenian Genocide and the state representing the interests of Genocide victims. It is necessary to specify the problem of legitimacy by Armenian Republic to present such claims. In this context, the priority is to find out the foundations for representing the legal interests towards claiming by the Armenian Republic the elimination of the aftermath of Armenian Genocide. This legal interest is of course substantiated at least by the following circumstances: Firstly, Armenian Republic is the aggrieved party of this International criminal action. Secondly, the latter represents the interests of the entire Armeniency, and lastly, AR

[6] In the legal domain of the Armenian Genocide there is an ideological vulnerability of research in that the problem of punishability of Turkish Republic is interconnected only with the Genocide Convention and with its possible feedback. In actual fact, the engagement into the discussion on the application of the Convention and its possible coming into force retroactively is nothing else but a legal deadlock. The problem is much deeper: since from the point of view of calling the Turkish Republic to International Legal account it is necessary to clarify not the problem of applicability of Genocide Convention to those events, but rather whether at the time of the Armenian Genocide the Ottoman Empire had International legal responsibility to prevent the extermination of the Armenian Nation as a permanent and stable human group. The International legal analysis of documents relevant to the Armenian Genocide enables us to definitely assert that at the time of implementing Genocide the Ottoman Empire had an International legal responsibility to prevent the Genocide from happening and not to implement the same. The existence of this responsibility is unambiguously attested by the Berlin 1878 Agreement, clause 61 in particular, as well as by the responsibilities adopted by Ottoman Empire at the Hague Convention in 1899 on the war-time legislation, see the Preface to the 1899 Convention, and other documents, asserting the responsibilities of Ottoman Empire. Similar responsibilities were confirmed on May 24, 1915, by the Joint Declaration of the Entente States where the wording "CRIME AGAINST HUMANITY AND CIVILIZATION" were used for the first time.

represents diplomatic defense of its own citizens or their legal successors, raising the relevant claims.[7]

6. From the point of view of claims, of great importance are the specifications of the claims advanced as well as their types and forms. The Armenian Genocide resulted in a great number of injuries to the Armenian Nation as well as to individuals. In the domain of demands the leading problem is the interstate (International legal) claims. It is to be noted that according to the contemporary International Law, the International legal responsibility bears not punitive but rather rehabilitating character, and it is aimed not at punishing the criminal state, but rather at restoring its legal position that had preceded the relevant International wrongdoing (status quo ante). Of course, in the context of the Armenian Genocide there is a low probability of this type of complete rehabilitation. Therefore, equivalent compensatory mechanisms have to embrace all means aimed at compensating the injuries in the domain of the International legal responsibility, like restitution (financial compensation for both material and moral injuries) and satisfaction, which in the case of the crime of genocide can have various manifestations: starting from a simple apology, up until relevantly justified territorial concessions.[8]

3. The next component of recognition and elimination of the aftermath of the Armenian Genocide will have to be **Research on Turkey's domestic constitutional and current legislation.** This research will enable legal institutions to be denounced for the heirs of the victims to obtain thereby at least compensation of property, as well as realization of responsibility on the part of Turkey.

Despite the difficulties in this domain, success is also quite possible, for the Turkey's legal system since the second half of the 20th century has followed the way of Europeanization. In that legal system there are Institutes, e.g.: constitutional justice, etc., making use of which may result in achieving individual or communal compensations.

On the other hand, one has to examine the Turkey's constitutional acts, edicts and declarations adopted in the 19th c. and in the early 20th c. discussing the discrimination with national attributes and their prohibition by the Turkish domestic constitutional restrictions.

From the point of view of a deeper study of Armenian Genocide of primary importance is to study the details of preparing this crime by the highest bodies of state control in Ottoman Turkey. Evidently, the process of preparing the Armenian

[7] Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը: 2014, 53:

[8] See **Վարդանյան Վ.**, September 19–20, 2014.

Genocide was completed in the form of a certain state-controlled program, expressly based upon the criminal intention to effectuate the genocide (Special intent, Dolus specialis), and indicating the means of its realization. In this connection, interesting research is being done by Academician R. Safrastian, giving a thorough scrutiny to the problems of Genocide and its genealogy in Ottoman Empire and the relevant domestic legislature of Turkey.[9] In this connection an interesting source is the verdicts reached by Turkish courts in the 1920s with regard to the government officials, members of the party of Young Turks. Those trials confirm the participation of state authorities in the process of genocide. The data of those trials must also be scrutinized from the viewpoint prohibited by the Turkish criminal legislature. In Turkish criminal legislature, the historical and progressive research of the Institute of crimes against man and mankind can possibly show just the perpetration of the crimes that are prohibited by the Turkish law. In this connection it should be considered that genocide per se is an abstract definition of crime which in reality can be manifested in numerous and multiaspect criminal actions.

4. Preparation of the Reference Atlas of the Armenian Genocide. Foreign visitors to Armenia who we want to become involved with the problems of genocide, can be taken to the memorial of Tsitsernakaberd, then to the museum of Genocide and are given a book describing some events of the Genocide. An ordinary visitor might be satisfied with that, but in the domain of official diplomatic relations it would be expressly insufficient. In the world of political diplomacy emotional impulses are inefficient. The significant things in this domain are the facts corroborating meaningful arguments.

Hence, we must have a geographic atlas of the Armenian Genocide showing and describing all places in Turkey and Armenia Proper from the late 19th century to the early 20th century having been the scene or borne witness to all cases of Genocide, massacres and forcible translocations, with indicated numbers of population subjected to those actions corroborated by documents and references, in particular: International, Turkish, Foreign, Armenian (down to witness accounts and source-bearing publications).

A very interesting aspect is presented in the work by Reimond Gevorkian, “Геноцид Армян. Полная История. М. 2015. (translated from English). A feature of this research is a geographic approach by the author and his attempt to recreate the

[9] See **Սաֆրաստյան Ռ.**, 2014, 5–19 as well as other publications of the same source of the last few years in which the Author states that the state-directed program of the Armenian Genocide had existed not in the form of a single document, but of three documents. Common for these three documents are the available intention to effectuate the Genocide, as well as the available specific means to perpetrate this crime.

images of the Armenian Genocide within the circles of Turkey's governance. According to the concept of the writer, the initial description includes the Armenian-populated localities within the Turkish administrative regions, their population's quantitative and qualitative characteristics, as well as public institutions. The subsequent presentations include the Genocide aftermath, genocide-confirming facts and the listings of corrupted state-employed officials.[10] However, there is one characteristic flaw of the research conceded by the author: It does not contain data from the Russian military and diplomatic archives.[11] Having adopted this research as an exemplary ground, we suggest to fill it in with original Armenian and Russian archival documentary data. According to R. Knorkian's formulation, "the inventory of officials" apart from the inventory, there must also be listings of the property possession, both movable and immovable, descriptions of businesses, banking assets, etc.[12] The listings must include not only private property, but also the public property of Armenian communities, churches, charities, educational facilities, etc. In this connection the American authors have prepared an interesting report using a grant from ARF showing all possible forms of compensation and the righteous decision making.[13]

This type of detailed and specific research will provide a documentary ground for further action. A shorter version of this research can be published in many languages and spread around. The two versions of this document can be compared to the original criminal case and the indictment, or bill of particulars.

The emergence of this type of directory is very important: its basic significance includes several directions: Using this instrument, the problem is translocated from the emotional domain to the domain of factual and legal knowledge. Apart from legal aspects, that will have great significance in the fields of politics and public relations.

The extended version of this atlas may play a significant role in case of discussing some issues in diplomatic environment. In this rapidly changing world this contingency may emerge very unexpectedly. But we are still essentially unprepared to it.

---

[10] **Ditto**, 8:

[11] True, prior to deportation, at certain places the movables were sold by Armenians, however, those sales cannot be regarded as lawful, for they were done urgently and under duress, physical and psychological, at low prices, incomparable to the market. Selling goods under threat has always been considered a good cause for calling off a deal.

[12] True, prior to deportation, at certain places the movables were sold by Armenians, however, those sales cannot be regarded as lawful, for they were done urgently and under duress, physical and psychological, at low prices, incomparable to the market. Selling goods under threat has always been considered a good cause for calling off a deal.

[13] See Հատուցումներ Հայոց ցեղասպանության դիմաց: 2014, 24 էջ:

Only in these four directions on condition of a steady and scheduled systematic work, as well as favorable International attitude, the Armenian Nation may succeed in having the Armenian Genocide recognized and its aftermath eliminated.

However, the main problem of success is that there be a mighty Armenian Republic free of political perturbations, mob-style democracy, foreignist idolatry and poverty. Hence, prior to deploying the Declaration, it is necessary to bring to rights the Armenian statehood, raise its legal authority, which will be the shining tribute to the victims of Genocide.

Thus, To translocate the issue of Armenian Genocide from historical plane to the practical legal plane, it is necessary to apply a new strategy to research and preparation of the issue, which includes five components: diplomacy or foreign policy, International law, Turkey's domestic legal grounds, Preparation of factual-documentary atlas of the Armenian Genocide upgrading the legal authority of the Armenian Statehood.

English by Hachatoor

BIBLIOGRAPHY

Պողոսյան Գ., – 2015, Հայ-թուրքական հարաբերությունների ընկալումը հասարակական գիտակցության մեջ, Երևան, 2015

Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը: (Իրավական ուղեցույց) **Վ. Վարդանյան**, **Ե. Կիրակոսյան**, Լ. **Գևորգյան**, Երևան, 2014:

Հատուցումներ Հայոց ցեղասպանության դիմաց: Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրության խմբի զեկույցը, վերջնական զեկույց, 2014:

Մարուքյան Ա., – 2014, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, Երևան, 2014:

Սաֆրաստյան Ռ., – 2014, Օսմանյան կառավարության որոշումը հայերի տեղահանության մասին (1915 թ. Մայիսի 30) «Հայագիտության հարցեր» հանդես, ԵՊՀ, Institute of Armenian Studies, N 1, Երևան, 2014 էջ 5–19:

Վարդանյան Վ., – 2014, «Հայոց ցեղասպանության պատժելիության միջազգային իրավական հիմքերի հիմնահարցը. Առկա լուծումներ և արդի հիմնախնդիրներ», a report presented at the 5th Congress "Armenia – Diaspora", Yerevan, September 19–20, 2014).

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
law@ysu.am

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՀԱՐՑԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր – հռչակագիր, ռազմավարություն, բաղադրատարր, քաղաքականություն, իրավական հարթություն, իրավական հիմքեր, փաստավավերագրական ատլաս, իրավահեղինակություն:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի շեմին դրա ճանաչման և դատապարտման ուղղությամբ իրականացվելիք ազգային քաղաքականության ամփոփ փաստաթուղթը դարձավ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»: Հռչակագիրն ի տարբերություն նախորդ շրջանի ցեղասպանության կապակցությամբ իրականացվող ներքին և արտաքին քաղաքականության, որը կարելի է որակել «փաստերի քաղաքականություն», ազդարարում է որակական շրջադարձ: Ոլորտում իրականացվող ազգային և պետական քաղաքականության այդ շրջադարձն արտահայտվում է Հռչակագրի 6-րդ կետով, համաձայն որի «Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքն է հասնել Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը և ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը»: Ակնհայտ է, որ Հայաստանը սկսում է նոր, ամենայն հավանականությամբ երկարատև գործընթաց, այն է՝ Հայոց ցեղասպանության հարցը պատմական հարթությունից տեղափոխել գործնական իրավական հարթություն և բացի Թուրքիայի կողմից այն ճանաչելուց հիմքեր նախապատրաստել հատուցման պահանջ ներկայացնելու համար:

Հայող ցեղասպանության՝ որպես հայկական հարցի տարրերից մեկի հարցում նման ռազմավարական խնդրի առաջադրումը, առաջին հերթին պահանջում է անցկացնել այդ ուղղությամբ մինչև այժմ իրականացված քայլերի և քաղաքականության ամփոփում-մոնիտորինգ, այսինքն՝ պարզել թե ինչ է արվել, ինչ չի արվել և ինչ պետք է արվի ապագայում:

Այս կապակցությամբ պետք է փաստել, որ մինչ այժմ հայկական կազմակերպությունների և Հայաստանի անկախացումից հետո հայ դիվանագիտութ-

յան իրականացրած քաղաքականությունը հաջողություններ է արձանագրել հիմնականում երկու ուղղություններով.

ա) Հայոց ցեղասպանության փաստերի արձանագրումը, որն իրականացվել է Հայաստանի, Սփյուռքի և օտար հետազոտողների կողմից և ներկայումս արդեն հավաքվել է մեծ քանակությամբ փաստական նյութ,

բ) միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտների՝ պետությունների մի մասի, ինչպես նաև որոշ միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը:

Արվածն, իհարկե, ծանրակշիռ գործ է, սակայն ակնհայտ է, որ դա դեռևս բավարար չէ: Հետևաբար առաջանում է Հայոց ցեղասպանության հետ կապված ազգային/պետական քաղաքականության ռազմավարական նպատակների, այդ նպատակներին հասնելու համար միջանկյալ խնդիրների ու մարտավարության կառուցման հարցը:

Մինչ այժմ այս հարցում մենք չենք ունեցել հստակ կառուցված քաղաքականություն և դրա ապահովման հետազոտական բազա: Խնդրին չենք մոտեցել համալիր, բազմակողմանի, ամբողջական և որ ամենակարևորն է՝ գործնական դիրքերից: Հարցն արծարծվել է ավելի շատ քարոզչական, հուզական, քան թե գործնական-իրավական հարթության վրա:

Ցեղասպանության ճանաչման, դատապարտման, հատուցման հասնելու ռազմավարության հարցում պետք է հրաժարվել ամպագոռգոռ հայտարարություններից, պաթետիկ-հուզական ելույթներից: Անհրաժեշտ է զգույշ, կոռեկտ, դիվանագիտական ու միջազգային իրավունքին հարիր ձևակերպումներով որոշել ռազմավարական նպատակը, որը, ըստ էության, սահմանված է Հռչակագրի 6-րդ կետում. **հասնել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դրա հետևանքների հաղթահարմանը:** Այս ռազմավարական նպատակի իրականացման համար անհրաժեշտ է մշակել իրավական պահանջների թղթածրար՝ դիտարկելով այն որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ:

Այսպիսի ռազմավարությունը նշանակում է, որ պատմական փաստերի վերականգնման, դրանց փաստագրական հիմքերի հայտնաբերման և արձանագրման քաղաքականությունից պետք է անցում կատարել որակապես նոր, գործնական ուղղվածություն ունեցող աշխատանքի: Դրա համար անհրաժեշտ է որոշել հետագա գործողությունների ուղղությունները, դրանցից ամեն մեկում գլխավոր խնդիրը, խնդրի լուծմանն ուղղված միջոցառումների ցանկը:

Որպես ռազմավարական նպատակ՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դրա հետևանքների հաղթահարմանը հասնելու համար,

մեր կարծիքով, անհրաժեշտ է իրականացնել առաջին հերթին հետազոտական քաղաքականություն, որը պետք է ներառի չորս բաղադրատարր.

ա) դիվանագիտական կամ արտաքին քաղաքական,

բ) միջազգային իրավական,

գ) Թուրքիայի ներպետական իրավական,

դ) Հայոց ցեղասպանության աշխարհագրական, փաստավավերագրական ատլասի կառուցումը, կոտորածները հաստատող փաստական, արխիվային, իրավական նյութի հաշվառումը, հասցված գույքային վնասների չափերի հաշվարկումը:

1. Դիվանագիտական կամ արտաքին քաղաքական բաղադրատարր: Այս ուղղությամբ ռազմավարական նպատակը Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դրա հետևանքների վերացումն է: Բայց քանի որ Թուրքիան որդեգրել է կեղծարարության, անհերքելի իրողության ժխտման քաղաքականություն, ապա առաջանում է նոր խնդիր՝ միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտների հետ դիվանագիտական շփումների ընթացքում հասնել նրանց կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դատապարտմանը: Այստեղ տեղին է դիալեկտիկայի օրինաչափության վկայակոչումը՝ քանակական փոփոխությունները ի վերջո հանգեցնելուն են որակական փոփոխությունների: Թուրքիայի ժխտողական քաղաքականությունն ի վերջո իրեն հանգեցնելու է դիվանագիտական ու արտաքին քաղաքական փակուղու, որովհետև միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման քանակական աճին զուգընթաց Թուրքիայի արտաքին քաղաքական վիճակն ավելի ու ավելի է վատթարանալու: Միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտների կողմից ցեղասպանության ճանաչումը ի վերջո Թուրքիային ստիպելու է հրաժարվել ժխտողական քաղաքականությունից, ճանաչել ու դատապարտել այն: Դրան նպաստող կարևորագույն գործոն է նաև թուրք հասարակության առաջադեմ մասի, այդ թվում առաջին հերթին՝ երիտասարդության (որոնց թիվն անընդհատ ավելանալու միտում ունի), վերաբերմունքի դրական փոփոխությունը այս հարցի նկատմամբ[1]:

Մյուս կողմից պետք է նկատի ունենալ, որ արդի աշխարհը հայտնվել է անընդհատ վերաձևումների շրջանում: 20-րդ վերջին և 21-րդ դարի սկզբին Եվրոպայում պետությունների սահմանների վերանայումները և նոր պետությունների առաջացման ալիքը տեղափոխվել է Արևելք: Այս կապակցությամբ զարգացումները կարող են լինել շատ անսպասելի և մեզ համար նպաստավոր, և դ-

[1] Այդ հանգամանքի մասին վկայում են, մասնավորապես՝ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գևորգ Պողոսյանի հետազոտությունների արդյունքները (տե՛ս **Պողոսյան Գ.**, 2015):

րան պատրաստ լինելու համար պետք է ձգտել ընդլայնել Հայոց ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած պետությունների շրջանակը:

2. Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հատուցման միջազգային իրավական բաղադրատարրը: Այս ուղղությամբ կատարված առաջին հետազոտություններն իրականացրել է պրոֆեսոր Յու. Բարսեղովը, ով միջազգային իրավունքի տեսակետից հիմնավորել է Թուրքիայի պատասխանատվությունը հայ ժողովրդի նկատմամբ իրականացրած հանցագործության համար[2]: Այս հիմնախնդիրը եղել և մնում է հայ և օտարազգի հետազոտողների ուշադրության կենտրոնում (Շ. Թորիկյան, Վ. Տատրյանը, Պ. Օհանյանը, Հ. Հակոբյանը, Ի. Արաբյանը, Վ. Վարդանյանը, Ա. Պապյանը, Ա. դե Չայասը, Ի.Վ. Տերնոնը, Արմեն Մարուքյանը[3] և այլոք):

Բավարարվել արվածով չի կարելի: Հարկավոր է կատարված հիմնավորումները լրացնել, դարձնել ամբողջական, բազմակողմանի: Միանշանակ կարելի է համաձայնվել այն տեսակետի հետ, որ «իրավական հարթության վրա կատարված ուսումնասիրությունները կրում են ավելի շատ գիտատեսական բնույթ, այնինչ անհրաժեշտ է պատմական փաստերը և միջազգային իրավական տեսական գիտելիքները տեղափոխել գործնական կիրառական հարթություն»[4]:

Ելնելով ռազմավարական գլխավոր նպատակից, անհրաժեշտ է նախանշել հարցի միջազգային-իրավական հիմքերի նախապատրաստման քաղաքական-իրավական ծրագիր, որում պետք է փորձել խորքային և հիմնավոր կերպով վեր հանել ցեղասպանության՝ որպես մարդկայնության դեմ ուղղված հանցագործության միջազգային-իրավական հիմքերը, սկսած դասական միջազգային իրավունքի շրջանից մինչև մեր օրերը: Այս ոլորտում գլխավոր խնդիրներ են՝ մշակել և ցույց տալ, որ մինչև 20-րդ դարի կեսը միջազգային իրավունքում ցեղասպանությունն արդեն արգելված արարք էր, որ Թուրքիան որպես պետություն ստանձնել էր միջազգային իրավական պարտավորություններ կանխարգելելու հայերի և այլ փոքրամասնությունների որպես կայուն և մշտական մարդկային խմբերի ոչնչացումը՝ սկսած 19-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի սկիզբը, որ դեռևս 1915 թ. միջազգային հանրությունը Թուրքիայի գործողությունները որակել էր որպես մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն: Այսպիսով, *Հայոց ցեղասպանության պատժելիության միջազգային իրավական հենքի*

[2] Այդ մասին տե՛ս **Մարուքյան Ա.**, 2014, 3:

[3] Ա. Մարուքյանի «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները» աշխատանքում (Երևան, 2014 թ.) հեղինակը հիմնավորել է, որ դեռ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Հայոց ցեղասպանությունը հանցագործություն է համարվել, անկախ հետագայում մշակված և ընդունված գենոցիդի միջազգային իրավական դոկտրինայի:

[4] Տե՛ս **Մարուքյան Ա.**, 2014, 4:

վերհանումը փոխկապակցված է մի շարք տարաբնույթ իրավական հիմնահարցերի հստակեցման հետ: Դրանք են մասնավորապես.

1. Հայոց ցեղասպանության պատժելիությունը հիմնավորող իրավական հիմքերի վերհանումը,
2. Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի իրավունքի հստակեցման հիմնահարցերը: Անդրադառնալով Հայոց ցեղասպանության պատժելիության հարցում չափազանց մեծ նշանակություն ունի այն խնդրի հստակեցումը, թե, արդյոք, ցեղասպանությունը, արգելված է եղել միջազգային իրավունքում մինչև Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին 1948 թ. կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) ընդունումը, թե վերջինս արգելվել է միայն դրա ուժի մեջ մտնելուց հետո, այն է՝ 1951թ. հունվարի 12-ին: Տվյալ հարցում պետք է առաջնորդվել հենց Կոնվենցիայի դրույթներով հոդված 1-ի դրույթներով, ինչպես նաև այլ փաստաթղթերով, որոնք նախորդել են Կոնվենցիայի ընդունմանը և որոնցում միանշանակորեն ճանաչվում է մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելն այդ հանցավոր արարքի արգելված լինելը[5]: Առաջարկվող մշակվելիք իրավական հիմնահարցերից է նաև միջազգային պայմանագրերի հետադարձ ուժի նախադեպերի ուսումնասիրությունը միջազգային իրավունքի պատմության մեջ:
3. Չափազանց կարևոր պետք է համարել Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավահաջորդության վերաբերյալ համապատասխան ուսումնասիրությունների կատարումը: Առաջին, անհրաժեշտ է հստակորեն հիմնավորել, որ Թուրքիայի Հանրապետությունը հանդիսանում է ոչ թե սոսկ Օսմանյան կայսրության իրավահաջորդ, այլ, որ վերջինս տվյալ պետության միջազգային իրավական ինքնության շարունակողն է: Երկրորդ, անհրաժեշտ է պարզել, թե Թուրքիայի Հանրապետությունը հանդիսանում է, արդյոք, Օսմանյան կայսրության իրավահաջորդ նաև միջազգային պատասխանատվությանն առումով, թե վերջինիս իրավահաջորդությունը սահմանափակվում է միայն պայմանագրերի, սեփականության, պարտքի և արխիվների հարցերով: Պետք է նշել, որ հիշյալ

[5] Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի իրավունքի հիմնահարցը քննարկելիս, նպատակահարմար ենք համարում հետազոտողների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ տվյալ տեսանկյունից վերլուծության առարկա պետք է դառնան ոչ թե ցեղասպանության հանցագործության համար միջազգային իրավական պատասխանատվություն նախատեսող առկա միջազգային և ներպետական իրավակարգավորումները, այլ Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակահատվածում գոյություն ունեցածները: Սա չափազանց կարևոր նշանակություն ունի հետագա միջազգային իրավական պահանջները պատշաճ եղանակով ներկայացնելու և տարատեսակ միջազգային և ներպետական ատյաններում ձախողումներից խուսափելու համար (տե՛ս **Վարդանյան Վ.**, 2014):

հիմնախնդիրը, այն է՝ իրավանախորդ պետության հակահիրավական արարքների համար իրավահաջորդի պատասխանատվությանն հիմնահարցը բավականաչափ ուսումնասիրված չէ միջազգային իրավունքի գիտության մեջ և անհրաժեշտ է համապարփակ հետազոտություններ կատարել նաև այս հարթությունում:

4. Օսմանյան կայսրության կողմից հայ ազգաբնակչության անվտանգության ոլորտում ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների ծավալի հստակեցումը[6]:
5. Հայաստանի Հանրապետության, որպես Հայոց ցեղասպանության արդյունքում տուժած և ցեղասպանության զոհերի շահերը ներկայացնող պետության իրավասության շրջանակների հստակեցումը: Անհրաժեշտ է հստակեցնել նաև Հայաստանի Հանրապետության կողմից նման պահանջներ ներկայացնելու իրավաչափության հիմնահարցը: Տվյալ համատեքստում նախևառաջ անհրաժեշտ է պարզել ՀՀ կողմից Հայոց ցեղասպանության հետևանքների վերացմանն առնչվող պահանջներ ներկայացնելու իրավական շահագրգռվածության (locus standi) հիմքերը: Նման իրավական շահագրգռվածությունը, իհարկե, հիմնավորվում է առնվազն հետևյալ հանգամանքներով. նախ Հայաստանի Հանրապետությունը տվյալ միջազգային իրավախախտումից տուժած պետություն է, երկրորդ վերջինս ներկայաց-

[6] Հայոց ցեղասպանության իրավական հարթության ոլորտում առկա հետազոտությունների հայեցակարգային խոցելիությունը նրանում է, որ դրանցում Թուրքիայի Հանրապետության պատժելիության հիմնահարցը փոխկապակցվում է միմիայն կամ գերազանցապես Ցեղասպանության մասին կոնվենցիայի և դրա հնարավոր հետադարձության հետ: Իրականում Կոնվենցիայի կիրառելիության և դրա հնարավոր ռետրոակտիվ ուժի վերաբերյալ տեսական բանավեճի մեջ մտնելը ոչ այլ ինչ է, քան իրավական ծուղակ: Հիմնահարցը շատ ավելի խորքային բնույթ է կրում, քանզի Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պատասխանատվությանն կանչելու տեսանկյունից անհրաժեշտ է պարզել ոչ թե այդ իրադարձությունների նկատմամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության հիմնահարցը, այլ այն, թե Հայոց ցեղասպանության ժամանակահատվածում Օսմանյան կայսրությունն ուներ, արդյոք, միջազգային իրավական պարտավորություն թույլ չտալու ժողովրդի, որպես մշտական և կայուն մարդկային խմբի ոչնչացումը: Հայոց ցեղասպանությանն առնչվող փաստաթղթերի միջազգային իրավական վերլուծությունը թույլ է տալիս վստահաբար պնդել, որ Հայոց ցեղասպանությունն իրագործելիս Օսմանյան կայսրությունն ուներ միջազգային իրավական պարտավորություն կանխարգելելու և չկատարելու նման ոչնչացումը: Նման պարտավորության առկայության մասին աներկբայորեն վկայում են, մասնավորապես, Բեռլինի 1878 թ. պայմանագրի (մասնավորապես հոդված 61), Պատերազմի օրենքների և սովորույթների մասին Հաագայի 1899 թ. կոնվենցիաների (մասնավորապես Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին 1899 թ. կոնվենցիայի նախաբան)[6] և այլ փաստաթղթերի հիման վրա Օսմանյան կայսրության ստանձնած պարտավորությունները: Նման պարտավորությունների գոյության վառ վկայությունն է նաև 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի պետությունների համատեղ հռչակագիրը, որտեղ առաջին անգամ օգտագործվեց հանցագործութուն մարդկայնության և քաղաքակրթության դեմ արտահայտությունը:

նում է համայն հայության շահերը և, վերջապես, ՀՀ-ն իրականացնում է իր իսկ քաղաքացիների կամ նրանց իրավահաջորդների դիվանագիտական պաշտպանություն՝ ներկայացնելով համապատասխան պահանջներ[7]:

6. Պահանջատիրության տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի ներկայացվելիք պահանջների և դրանց տեսակների ու ձևերի հստակեցումը: Հայոց ցեղասպանության արդյունքում հայ ժողովրդին և առանձին անհատներին պատճառված վնասները բազմապիսի են և բազմատեսակ: Պահանջատիրության տիրույթում, իհարկե, առավելապես կարևորվում է միջպետական (միջազգային իրավական) պահանջներ ներկայացնելու հիմնահարցը: Անհրաժեշտ է նշել, որ ժամանակակից միջազգային իրավունքում միջազգային իրավական պատասխանատվությունը կրում է ոչ թե պատժիչ, այլ վերականգնողական բնույթ և ուղղված է, ոչ թե իրավախախտ պետությանը պատժելուն, այլ այն իրավական վիճակի վերականգնմանը, որը նախորդել է համապատասխան միջազգային իրավախախտման կատարմանը (status quo ante): Իհարկե Հայոց ցեղասպանության համատեքստում քիչ հավանական է թվում նման ամբողջական վերականգնման հնարավորությունը: Ուստիև, համարժեք հատուցման մեխանիզմները պետք է ընդգրկեն միջազգային իրավական պատասխանատվության ոլորտում վնասի հատուցմանն ուղղված բոլոր միջոցները, ինչպիսիք են ռեստիտուցիան, փոխհատուցումը (թե նյութական, թե բարոյական վնասի ֆինանսական հատուցումը) և սատիսֆակցիան (բավարարումը), որը ցեղասպանության հանցագործության պարագայում կարող է ունենալ տարատեսակ դրսևորումներ՝ սկսած հասարակ ներողության հայցումից և մինչև համապատասխան արդարացի տարածքային հատուցումների տրամադրումը[8]:

3. Հայոց ցեղասպանության ճանաչման և հետևանքների վերացման քաղաքականության հաջորդ բաղադրատարրը պետք է դառնա **Թուրքիայի ներպետական սահմանադրական և ընթացիկ օրենսդրության հետազոտությունը:** Այդ հետազոտությունը հնարավորություն կտա վեր հանել այն իրավական ինստիտուտները, որոնցով ցեղասպանության զոհերի ժառանգները կկարողանան հասնել գոնե գույքային հատուցման, ինչպես նաև Թուրքիայի նկատմամբ պատասխանատվության իրացման:

Չնայած բարդությունների այս ոլորտում անշուշտ հաջողություններ հնարավոր կլինի արձանագրել, որովհետև Թուրքիայի իրավական համակարգը 20-

[7] Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը: Իրավական ուղեցույց, 2014, 53:

[8] Տե՛ս **Վարդանյան Վ.**, «Հայոց ցեղասպանության պատժելիության միջազգային իրավական հիմքերի հիմնահարցը. Առկա լուծումներ և արդի հիմնախնդիրներ». Զեկույց ներկայացվել է «Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողով»-ի շրջանակներում, Երևան, 2014, սեպտեմբերի 19–20:

րդ դարի երկրորդ կեսից գնացել է եվրոպականացման ուղղությամբ: Այդ իրավական համակարգում կան ինստիտուտներ, օրինակ՝ սահմանադրական արդարադատությունը և այլն, որոնք օգտագործելով միգուցե հնարավոր է հասնել անհատական և համայնքնային հատուցման:

Մյուս կողմից պետք է վեր հանվեն Թուրքիայի այն սահմանադրական ակտերը, հռչակագրերն ու հրովարտակները, որոնք ընդունվել են 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին և, որոնցում արծարծվում էր ազգային հատկանիշով խտրականությունը, դրա արգելքը, Թուրքիայի ներպետական սահմանադրական պարտավորությունները:

Հայոց ցեղասպանության ավելի խորը ուսումնասիրության տեսանկյունից խիստ կարևոր է օսմանյան Թուրքիայի պետական կառավարման բարձրագույն մարմինների կողմից այդ հանցագործության նախապատրաստման մանրամասների բացահայտումը: Ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության նախապատրաստման գործընթացը ամբողջացել է որոշակի պետական ծրագրի տեսքով, որտեղ արտահայտված էր ցեղասպանություն իրագործելու հանցավոր դիտավորությունը (Special intent (Dolus specialis)) և նշված էին այն իրականացնելու միջոցները: Այս առումով հետաքրքիր հետազոտություններ է իրականացնում ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանը, որը համակողմանի հետազոտում է Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության հիմնահարցերը և դրա հետ կապված Թուրքիայի ներպետական օրենսդրությունը[9]: Այս կապակցությամբ հետաքրքիր աղբյուր է նաև 1920-ական թվականների թուրքական դատարանների կայացրած դատավճիռները երիտթուրքերի կառավարության պաշտոնյաների նկատմամբ: Այդ դատավարությունները հաստատում են պետական իշխանության և իշխանավորների մասնակցությունը ցեղասպանության գործընթացին: Այդ դատավարություններում պարունակվող տվյալները պետք է դիտարկել նաև Թուրքիայի քրեական օրենսդրությամբ արգելված արարքների տեսանկյունից: Թուրքիայի քրեական օրենսդրության մեջ մարդու և մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների ինստիտուտի պատմական զարգացման հետազոտությունը հնարավոր է որ ցուցադրի հենց թուրքական օրենքներով արգելված հանցանքների կատարման փաստը: Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ ցեղասպանութ-

[9] Տե՛ս **Ռ. Սաֆրաստյան**, Օսմանյան կառավարության որոշումը հայերի տեղահանության մասին /1915 թ. Մայիսի 30/, Հայագիտության հարցեր, Հանդես, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, թիվ 1, Երևան, 2014, էջ 5–19, ինչպես նաև նույնի վերջին տարիների այլ հրապարակումները, որոնցում հեղինակը հիմնավորում է, որ Հայոց ցեղասպանության պետական ծրագիրը գոյություն է ունեցել ոչ թե մեկ, այլ երեք փաստաթղթի տեսքով: Այդ վավերագրերի համար ընդհանուր է ինչպես ցեղասպանության իրականացման դիտավորության, այնպես էլ այդ հանցագործությունը իրագործելու կոնկրետ միջոցների առկայությունը:

յունն ինքը վերացարկված հանցակազմ է, որն իրականության մեջ կարող է դրսևորվել բազմաթիվ և բազմատեսակ սովորական քրեաիրավական արարքների կատարմամբ:

4. Հայոց ցեղասպանության պաշտոնական ատլաս տեղեկատուի նախապատրաստումը: Հայաստան այցելող օտարերկրացուն, որին ուզում ենք հաղորդակից դարձնել ցեղասպանության հարցերին, կարող ենք առաջին հերթին տանել Ծիծեռնակաբերդ, այնուհետև ցեղասպանության թանգարան, նվիրենք ինչ-որ գիրք՝ նվիրված Հայոց ցեղասպանության ինչ-որ դրվագին: Սովորական օտարերկրացի այցելուի համար երևի թե բավարար է այսքանը, բայց դիվանագիտական պաշտոնական հարաբերությունների ոլորտում դրանք խիստ անբավարար միջոցառումներ են: Դիվանագիտական քաղաքական ոլորտում զգայական-զգացմունքային դրսևորումները շատ թույլ ազդակներ են: Այստեղ հարգի են փաստերը, դրանք վավերացնող, հաստատող իրավավավերագրական հիմքերը:

Այստեղից էլ հետևում է, որ մենք պետք է ունենանք Հայոց ցեղասպանության աշխարհագրական ատլաս (պայմանական անվանենք այսպես), որում կներկայացվի Թուրքական պետության բոլոր տարածքներում և բուն Հայաստանում 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկիզբը տեղի ունեցած ցեղասպանության և կոտորածների, բռնատեղափոխումների բոլոր դեպքերը, կոտորված և բռնատեղափոխված բնակչության քանակը, դրանք հաստատող վավերագրական-իրավական փաստերը, մասնավորապես՝ ա) միջազգային, բ) թուրքական, գ) օտարերկրյա, դ) հայկական (ընդհուպ մինչև ականատեսների հուշերը), այդ նյութերի աղբյուրները, գտնվելու վայրը, հրապարակված լինելու դեպքում վկայակոչումները և այլն:

Այս տեսանկյունից հետաքրքիր ուղղվածություն ունի Ռայմոն Գևորգյանի «Геноцид Армян, Полная история, М., 2015» հրատարակությունը, որը դրա անգլերեն տարբերակի թարգմանությունն է: Այդ հետազոտության առանձնահատկությունն այն է, որ հեղինակը հետազոտության հիմքում դրել է աշխարհագրական մոտեցումը և փորձել է վերականգնել Հայոց ցեղասպանության պատկերը Թուրքիայի վարչական շրջաններում: Հետազոտողի այս մոտեցման հիման վրա, սկզբում նկարագրվում են Թուրքիայի վարչական շրջաններում հայկական բնակավայրերը, դրանց բնակչությունը, բնակչության քանակական և որակական կողմերը, հանրային հիմնարկները: Այնուհետև ներկայացվում են ցեղասպանության հետևանքները, բերվում են ցեղասպանությունը հաստատող փաստերը, մեղսագործ պետական «պաշտոնյաների ինվենտարիզացիան»[10]: Սակայն ինչպես հեղինակն է խոստովանում, իր հետազոտությանը

[10] Տե՛ս **Кеворкян Р.**, 2015, 10.

բնութագրական է նաև որոշակի թերություն: Այն չի ներառում ռուսական զինվորական և դիվանագիտական արխիվների նյութերը[11]: Այս հետազոտությունն ընդունելով որպես օրինակելի հիմք՝ առաջարկում ենք այն լրացնել արդեն բուն հայկական և ռուսական արխիվային վավերագրական նյութերով: Ըստ Ռ. Կևորկյանի ձևակերպման «չինովնիկների ինվենտարիզացիայից», գույքագրումից բացի պետք է կազմել ամեն մի հայկական թաղամասի, բնակավայրի, բառիս բուն իմաստով գույքի՝ սեփականության գույքագրումը՝ ներառելով դրանում շարժական և անշարժ գույքը, բիզնեսը, բանկային ակտիվները և այլն: Ընդ որում ոչ միայն մասնավոր սեփականության, այլև հայկական համայնքների հանրային գույքի՝ եկեղեցական, բարեգործական, կրթական և այլն[12]: Այս կապակցությամբ ՀՅԴ դրամաշնորհի միջոցով հետաքրքիր զեկուցում են պատրաստել ամերիկացի հեղինակները, ովքեր վեր են հանել հատուցման բոլոր հնարավոր ձևերը և արդարացի լուծման միջոցները[13]:

Այս կերպ՝ մանրամասն և կոնկրետ հետազոտությունների իրականացումը այն կվերածի հաստածավալ փաստավավերագրական հիմքի: Դրա հիման վրա կարելի է ձեռնարկել նույնի ավելի համառոտ տարբերակի կազմումը, թարգմանել այն աշխարհի շատ լեզուներով ու տարածել: Այս երկուսի ընդարձակի և համառոտի հարաբերակցությունը կարելի է պատկերացնել որպես բուն քրեական գործի և դրա վրա կառուցված մեղադրական եզրակացության հարաբերակցություն:

Այդպիսի հիմնավոր տեղեկատուի առկայությունը շատ կարևոր է, ունի մի քանի ուղղությամբ հիմնավոր նշանակություն: Դրանով հարցը զգացմունքային ոլորտից կտեղափոխվի փաստագրական-իրավական ոլորտ: Բացի իրավականից այն կունենա շատ մեծ տեղեկատվական քաղաքական, ինչպես նաև զանգվածային քարոզչական նշանակություն:

Այդ ատլասի ընդարձակ տարբերակը ապագայում կարևոր նշանակություն կարող է ունենալ միջազգային որևէ ատյանում հարցի քննարկման հնարավորության դեպքում: Արագ փոփոխվող արդի աշխարհում այդ հնարավորությունը կարող է առաջանալ շատ անսպասելի: Բայց մենք դրան ըստ էության դեռևս պատրաստ չենք:

---

[11] Տե՛ս նույն տեղը, էջ 8:

[12] Ճիշտ է բռնագաթից առաջ շարժական գույքը որոշ վայրերում հայերի կողմից օտարվել է, սակայն այդ օտարումը չի կարելի համարել օրինական, որովհետև այն կատարվել է հոգեբանական և ֆիզիկական սպառնալիքի ազդեցության տակ, հապշտապ, շուկայականից խիստ տարբերվող ցածր գներով: Սպառնալիքի ազդեցությամբ գույքի օտարումը միշտ էլ դիտարկվել է և դիտարկվում է գործարքների անվավերության հիմք:

[13] Տե՛ս Հատուցումներ Հայոց ցեղասպանության դիմաց: Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրության խմբի զեկույցը, վերջնական զեկույց, 2014, 24 էջ:

Միայն այս չորս ուղղություններով (հնարավոր է աշխատանքի ընթացքում առաջանան նաև այլ ուղղություններ) համառ, ծրագրված ամբողջական և համակարգված աշխատանքի դեպքում, ինչպես նաև միջազգային նպաստավոր պայմանների առկայությամբ հայ ժողովուրդն հնարավորություն կունենա արձանագրելու հաջողություններ հայոց ցեղասպանության ճանաչման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ:

Սակայն հաջողության գլխավոր գրավականը, հիմքը՝ կայուն և հզոր Հայաստանի Հանրապետությունն է, զերծ քաղաքական ցնցումներից, հանրահավաքային և ամբոխավարական ժողովրդավարությունից, աղքատությունից, օտարամոլությունից: Հետևաբար Հռչակագրի կենսագործման համար, դրանից առաջ և դրան զուգահեռ, անհրաժեշտ է կարգի բերել հայոց պետականությունը, բարձրացնել նրա իրավահեղինակությունը, որը ցեղասպանության զոհերի հիշատակի ամենավառ ոգեկոչումն է:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության հարցը պատմական հարթությունից գործնական իրավական հարթություն տեղափոխելու համար անհրաժեշտ է հարցի հետազոտման և նախապատրաստման նոր ռազմավարություն, որը ներառում է հինգ բաղադրատարր. ա) դիվանագիտական կամ արտաքին քաղաքական, բ) միջազգային իրավական, գ) Թուրքիայի ներպետական իրավական, դ) Հայոց ցեղասպանության փաստավավերագրական ատլասի պատրաստում, ե) հայոց պետականության իրավահեղինակության բարձրացում:

ГАГИК КАЗИНЯН
Доктор юридических наук, профессор, академик НАН РА
law@ysu.am

ПОЛИТИКО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПРИЗНАНИЯ И КОМПЕНСАЦИИ ГЕНОЦИДА АРМЯН: НОВАЯ СТРАТЕГИЯ ИССЛЕДОВАНИЯ И ПОДГОТОВКИ ВОПРОСА

РЕЗЮМЕ

В статье рассматривается проблема переноса вопроса Геноцида армян из исторической в практическую правовую плоскость и предлагается стратегия подготовки и исследования данного вопроса, что в свою очередь предполагает наличие пяти компонентов: а) дипломатический или внешнеполитический, б) международно-правовой, в) внутриправовой (для Турции), г) подготовка фактографического атласа Геноцида армян и д) повышение легитимности армянской государственности.

Ключевые слова: декларация, стратегия, компонент, политика, правовая плоскость, правовые основания, фактографический атлас, легитимность.